ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Բանակի օրվա առթիվ

28.01.2020

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, Նվիրական բարձր զգացումով շնորհավորում եմ բոլորիս Բանակի օրվա առթիվ: Արդեն 28-րդ տարին է հայ ազգը մեծ հպարտությամբ և հոգու խնդությամբ տոնում է իր ազգային անվտանգության ու կայունության երաշխավորի՝ Հայոց հաղթանակած բանակի տարեդարձը:

Այս տարիների ընթացքում մեր բանակը գործով է ապացուցել իր մարտունակությունը՝ վստահորեն և պատվով կատարելով իր առջև դրված խնդիրներն ու դառնալով մեր հավաքական ուժի և միասնության խորհրդանիշը, մեր պետականության ամրապնդման գլխավոր երաշխիքը:

Եվ այսօր երախտագիտությամբ ենք հիշում Արցախի ազատագրության, Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած մեր նվիրյալ հերոսներին և գլուխ խոնարհում նրանց հիշատակի առջև: Հպարտությամբ շնորհակալություն ենք հայտնում իրենց զինվորական պարտքը կատարող մեր զինվորներին ու սպաներին, որոնք այս պահին էլ սահմանին կանգնած իրականացնում են մարտական ծառայություն՝ խաղաղության մեջ պահելով մեր երկիրն ու ժողովրդին:

Սիրելի բարեկամներ, կասկածից վեր է, որ մեր բանակը շարունակելու է իր զորացման ուղին՝ կատարելագործելով ու զարգացնելով իր մարտական հմտությունները: Մենք էլ հպարտությամբ փաստելու ենք, որ հանձին նրա՝ ունենք ամրակուռ, միասնական ու վիթխարի մի ուժ, որը շարունակելու է խաղաղություն պարտադրել թշնամուն և ապահովել հայրենի երկնակամարի անդորրը:

Շնորհավոր տոնդ, Հայոց հաղթանակած բանակ, շնորհավոր տոնդ հայ զինվոր և անպարտելի հայ ժողովուրդ: